ՆՈՐԻՆ ՍՐԲՈՒԹՅՈՒՆ ԲԵՆԵԴԻԿՏ ԺԶ ՊԱՊԻ ԿԵՆՍԱԳՐՈՒԹՅՈՒՆԸ

Կարդինալ Յոզեֆ Ռացինգերը՝ Վատիկանի Հավատո Քննության Բաժանմունքի, Պապական Սուրբգրային Հանձնախմբի և Միջազգային Աստվածաբանական Հանձնախմբի, Կարդինալների Խորհրդի նախկին նախագահը, ծնվել է 1927 թ. ապրիլի 16-ին, Գերմանիայում: Ձեռնադրվել է 1951 թ. հունիսի 29-ին:

1946-1951 թթ., երբ ձեռնադրվում է և սկսում դասավանդել, փիլիսոփայություն և աստվածաբանություն էր ուսումնասիրում Մյունխենի համալսարանում և Ֆրեյզինգի բարձրագույն դպրոցում: 1953 թ. պաշտպանում է դոկտորական թեզ՝ «Մարդիկ և Աստծո Տունը Ս. Օգոստինոսի՝ Եկեղեցու վարդապետության մեջ» վերնագրով: Չորս տարի անց ստանում է համալսարանի դասախոսի որակավորում: Այնուհետև դավանաբանություն և ֆունդամենտալ աստվածաբանություն է դասավանդում Ֆրեյզինգի փիլիսոփայության և աստվածաբանության բարձրագույն դպրոցում, 1959-1969 թթ.՝ Բոննում, 1963-1966 թթ.՝ Մյունսթերում, իսկ 1966-1969 թթ.՝ Տուբինգենում: 1969 թվականից դասավանդում է դոգմատիկ աստվածաբանություն և դավանաբանության պատմություն Ռեգենսբուրգի համալսարանում՝ լինելով և նույն համալսարանի փոխռեկտորը:

Նա արդեն բավականին հայտնի էր 1962 թ., երբ Վատիկանի Բ Ժողովի ժամանակ 35 տարեկանում դարձավ Կոլոնի Արքեպիսկոպոս Յոզեֆ Կարդինալ Ֆինգսի խորհրդականը: Իր բազմաթիվ հրատարակությունների մեջ առանձնակի տեղ է զբաղեցնում «Քրիստոնեության ներածություն»՝ համալսարանական դասախոսությունների ժողովածուն, որը վերաբերում է առաքելական հավատքի դավանությանը: Այն լույս է տեսել 1968 թ., և «Դոգմա և հայտնություն»-ը՝ հովվական ծառայությանը նվիրված էսսեների, քարոզների ու խոհերի ժողովածուն, որ լույս է տեսել 1973 թ.:

1977 թ. մարտին Պողոս Զ Պապը նրան նշանակում է Մյունխենի և Ֆրեյզինգի Արքեպիսկոպոս, իսկ 1977 թ. մայիսի 28-ին դառնում է Բավարիայի թեմի առաջնորդը:

1977 թ. հունիսի 27-ին կարդինալի կոչում է ստանում Պողոս Զ Պապի կողմից:

1981 թ. նոյեմբերի 25-ին Հովհաննես-Պողոս Բ Պապի կողմից նշանակվում է Հավատո Քննության Բաժանմունքի, Պապական Սուրբգրային Հանձնախմբի և Միջազգային Աստվածաբանական Հանձնախմբի նախագահ:

Մասնակցել է Եպիսկոպոսների Սինոդի 5-րդ Գլխավոր Ասամբլեային (1980 թ.), ինչպես նաև հանդիսացել 6-րդ Սինոդական Ասամբլեայի պատվիրակության նախագահը (1983 թ.):

1998 թ. նոյեմբերի 6-ին կարդինալների կողմից ընտրվում է Կարդինալների Խորհրդի փոխնախագահ, իսկ 2002 թ. նոյեմբերի 30-ին Հովհաննես-Պողոս Բ Պապը Կարդինալ Ռացինգերին նշանակում է Կարդինալների Խորհրդի նախագահ:

Լինելով Կաթոլիկ Եկեղեցու Կատեխեզիսի պատրաստման հանձնախմբի նախագահը՝ վեցամյա աշխատանքից հետո (1986-92 թթ.) Պապին է ներկայացնում նոր Կատեխեզիսը:

1999 թ. նոյեմբերի 10-ին Մարիա Սանտիսիմա Ասունտա համալսարանի կողմից նրան շնորհվում է պատվո ատիճան իրավաբանության բնագավառում, իսկ 2000 թ. նոյեմբերի 13-ին դառնում է Գիտությունների Պապական Ակադեմիայի պատվավոր անդամ:

2005 թ. ապրիլի 19-ին ընտրվում է Հռոմի Պապ՝ ստանալով Բենեդիկտ ԺԶ անունը:

Անդամ է.

- Պետ. քարտուղարության (second section),
- Արևելյան Եկեղեցիների, Աստվածպաշտության և Խորհուրդների մասին կանոնների, Ավետարանի քարոզչության, եպիսկոպոսների և Կաթոլիկ կրթության բաժանմունքների,
- Քրիստոնեական Միության Խորհրդի,
- Լատինական Ամերիկա, Ասիոն Եկեղեցի (Ecclesia Dei) Հանձնախմբերի:

ՀՈՎԱԿԻՄ ԱԲԵՂԱ ՄԱՆՈՒԿՅԱՆ
ԳԱՅԱՆԵ ԱԼԵՔՍԱՆՅԱՆ
Միջեկեղեցական հարաբերությունների բաժին